ՄԵՋԼԻՑ
ՄԵԿԸ
ՍՏՈՒՄԷ

KAREN M. McMANUS

ONE OF US IS LYING

ՔԱՐԵՆ ՄԱԿՄԱՆՈՒՍ

ՄԵՋՆԻՑ ՄԵԿԸ ՍՏՈՒՄ Է

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Մ 180

Մակմանուս Քարեն
Մ 180 Մեզնից մեկը ստում է: Վեպ / Ք. Մակմանուս; Թարգմանությունն անգլերենից՝ Ա. Աթաբեկյանի.- Եր.: Newmag, 2023.- 440 էջ:

Երկուշաբթի կեսօրին Բեյվյու ավագ դպրոցի հինգ աշակերտներ տարբեր պատճառներով պատժվում են և պատիժը կրելու համար հայտնվում նույն սենյակում: Բրոնուինը խմբի ուղեղն է, երբեք ոչ մի օրենք չի խախտում, երազում է ընդունվել Եյլի համալսարան: Ադին խմբի գեղեցկուհին է՝ արքայադստեր տեսքով ու պահանջներով: Նեյթին բաժին է հասել հանցագործի պիտակը. նա արդեն հասցրել է օրենք խախտել: Կուպերը մեծ պոտենցիալով մարզիկ է, բեյսբոլի ապագա աստղ: Խմբի հինգերորդ անդամը Սայմոնն է, որն աչքի է ընկել միայն դպրոցական բամբասանքի հավելված ստեղծելով: Պատժի սենյակ մտնում են հինգը, բայց ողջ են դուրս գալիս չորսը: Սայմոնն անհայտ պատճառով մահանում է: Քննիչները վստահ են, որ դա դժբախտ պատահար չէ: Սայմոնը մահանում է երկուշաբթի: Նա պլանավորել էր իր հավելվածում երեքշաբթի օրը ցնցող բացահայտումներ անել դասընկերների մասին: Այժմ սպանության մեջ կասկածվում է սենյակից ողջ դուրս եկած ամբողջ քառյակը: Ողջ մնացած չորս հոգին էլ մոտիվ ունեն: Չորսն էլ թաքցնելու բան ունեն: Եվ չորսն էլ կասկածելի կապ ունեն Սայմոնի հետ: Նրանցից առնվազն մեկը հաստատ ստում է:

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Գլխավոր գործընկեր՝
ԶԱՆԳԱԿ ԳՐԱՏՈՒՆ
zangakbookstore.am

ԶԱՆԳԱԿ
ԳՐԱՏՈՒՆ

ISBN 978-9939-884-87-5
Քարեն Մակմանուս «Մեզնից մեկը ստում է» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
One of Us is Lying © 2017 by Karen M. McManus

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն

Մաս 1 9
Սայմոնն ասում է

Մաս 2 137
Պահմտոցի

Մաս 3 267
Ճշմարտություն կամ համարձակություն

Վերջաբան 423
Երեք ամիս անց

Երախտագիտության խոսք 435

Զեքին, որը միշտ ծիծաղեցնում է ինձ

ՄԱՍ 1

Սայմոնն ասում է

ԳԼՈՒԽ 1

Բրոնուին
Երկուշաբթի, սեպտեմբերի 24, 14:55

Ինչ-որ մեկի սեքսի տեսագրությունը: Վախ անցանկալի հղիությունից: Երկու սկանդալային դավաճանություն: Եվ այսքանն ընդամենը մի շաբաթվա նորություններն են: Եթե Բեյվյու ավագ դպրոցի մասին կարծիք կազմեք ըստ Սայմոն Քելեհերի բամբասանքների հավելվածի, կմտածեք՝ տեսնես այս մարդիկ ե՞րբ են հասցնում դասի գնալ:

— Հնացած բան է, Բրոնուի՛ն,– լսում եմ թիկունքիցս: — Ա՛յ, սպասիր, վաղվա փոսթը կպայթեցնի դպրոցը:

Գրո՛ղը տանի: Տանել չեմ կարողանում, երբ ինձ բռնեցնում են «Այդ մասին»-ը կարդալիս, հատկապես, եթե դա հեղինակն է անում: Անջատում եմ հեռախոսս ու շրխկոցով փակում պահարանիս դուռը:

— Այս անգա՛մ ում կյանքն ես փչացնելու, Սայմո՛ն:

Սայմոնը հասնում է իմ հետևից, ու միասին քայլում ենք դեպի ելքը շտապող աշակերտների հոսանքին հակառակ:

— Հանրօգուտ գործ եմ անում,– արհամարհական ասում է

նա: — Դու, ի դեպ, պարապում ես Ռեգի Քրոլիի հետ, չէ՞: Գոնե գիտե՞ս, որ նրա ննջասենյակում տեսախցիկ կա:

Չեմ էլ ուզում պատասխանել: Դա՛ էր պակաս. ավելի շուտ Սայմոնի մեջ խիղճ կարթնանա, քան կհետաքրքրվեմ, թե ինչ է կատարվում Ռեգի Քրոլիի ննջասենյակում, որը միշտ թմրադեղի տակ է:

— Ամեն դեպքում իմացիր՝ նրանք տեսախցիկն իրենց կողմն են պահում: Եթե մի օր մարդիկ հանկարծ որոշեն էլ չստել ու չդավաճանել, առանց գործի կմնամ,– Սայմոնն իր սառը, կապույտ աչքերով նկատում է, որ քայլերս արագացնում եմ: — Այդ ո՞ւր ես շտապում: Ուզում ես արտադասարանական փառքի մեջ լող տալ, հա՞:

Երանի՜ թե: Ու հենց այդ պահին հակառակի պես հեռախոսս ազդանշան է տալիս.

— Մաթեմատիկայի պարապմունք՝ 15:00, «Իփոք քոֆի»:

Դրան հաջորդում է թիմակցիս հաղորդագրությունը.

— Էվանը տեղում է:

Դե իհարկե: Այս բարետես մաթլետը (աթլետ-մաթլետ. համաձայն եմ, այնքան էլ հարմար օքսիմորոն չէ) միշտ հայտնվում է միայն այն ժամանակ, երբ զբաղված եմ:

— Չէ հա՛,– ասում եմ:

Ընդհանուր կանոն կա, որը հետևողականորեն պահպանում եմ, հատկապես վերջերս. աշխատում եմ հնարավորին չափ քիչ տեղեկություն տալ Սայմոնին: Կանաչ մետաղական դռները հրելով՝ դուրս ենք գալիս հետևի սանդղահարթակ, որը բաժանարար գիծ է Բեյվյուի դպրոցի հին հետնախորշի ու պայծառ, ընդարձակ, նոր թևի միջև: Ամեն տարի նորանոր հարուստ ընտանիքներ են հայտնվում, որոնք հեռանում

են Սան Դիեգոյից և տեղափոխվում 24 կմ արևելք՝ Բեյվյու: Նրանք հույս ունեն, որ այստեղ իրենց հարկային դոլարներով ավելի լավ միջավայր կապահովեն երեխաների համար, քան պոպկորնի հետքերով առաստաղի տակ, պատառոտված լինոլեումի վրա ծավալվող դպրոցական կյանքը:

Հասնում եմ երրորդ հարկ՝ պարոն Էյվերիի սենյակ, ու այդ ամբողջ ընթացքում Սայմոնը կրնկակոխ հետևում է ինձ: Շրջվում եմ՝ թևերս կրծքիս խաչելով.

— Լսի՛ր, դու ինչ-որ տեղ էիր գնում, չէ՞:

— Գնում էի: Դասերից հետո պիտի մնամ, պատժված եմ,– ասում է Սայմոնն ու սպասում, որ կշարունակեմ քայլել: Ու երբ գնալու փոխարեն ձեռքս տանում եմ դռան բռնակին, ծիծաղից պայթում է: — Հավատս չի՛ գալիս: Ուրեմն դո՛ւ էլ: Քո՛ մեղքը որն է:

— Գլխիս սարքել են,– փնթփնթում եմ ես ու լայն բացում դուռը: Ներսում արդեն երեքը կան, ու մի պահ կանգ եմ առնում, որ հասկանամ, թե ովքեր են: Չէ, հաստատ նրանց չէի սպասում տեսնել: Բացի մեկից:

Նեյթ Մաքոլին աթոռը հետ է տանում ու քմծիծաղ տալիս:

— Սխալ տեղ ես ընկել: Այստեղ դասից հետո մնացածներն են հավաքվում, ոչ թե դպրոցի խորհուրդը:

Ով՝ ով, բայց նա լա՛վ գիտի: Հինգերորդ դասարանից Նեյթն անընդհատ խնդիրների մեջ է ընկնում. մոտավորապես հենց այդ ժամանակ ենք վերջին անգամ զրուցել: Լուրեր են պտտվում, որ նա Բեյվյուի ոստիկանության ուշադրության կենտրոնում է և պայմանական ազատազրկման մեջ է, չգիտեմ էլ՝ ինչի համար: Պատճառն ինչ ասես կարող է լինել՝ ոչ սթափ վիճակում մեքենա վարելուց մինչև թմրադեղերի

վաճառք: Բոլորին էլ հայտնի է, որ նրանից կարելի է դեղ գնել, բայց իմ տեղեկությունները զուտ տեսական են:

— Կխնդրեմ առանց մեկնաբանությունների,– պարոն Էյվերին ինչ-որ բան է նշում մատյանում ու Սայմոնի հետևից փակում դուռը:

Բարձր, կամարաձև պատուհաններից արևի եռանկյունաձև շողերն ընկնում են հատակին, իսկ կայանատեղիի հետևից՝ դաշտից, ֆուտբոլի պարապմունքի թույլ ձայներն են լսվում:

Տեղավորվում եմ Կուպեր Քլեյի կողքին, որը ճմռթած թղթից բեյսբոլի գնդակ է սարքում ու շշնջում.

— Ուշադի՛ր, Ադի՛,– ու գնդակը նետում է դիմացը նստած աղջկան:

Ադի Փրենթիսն աչքով է անում, անորոշ ժպտում, ու գնդակն ընկնում է հատակին:

Դասասենյակի ժամացույցի սլաքները դանդաղ թեքվում են դեպի երեքը, ու ես անզոր հետևում եմ դրանց. ինչպիսի՜ անարդարություն: Ախր այստեղ չպիտի լինեի: Հիմա արդեն պիտի «Իփոք քոֆիում» լինեի, վախվորած սիրախաղ անեի Էվան Նեյմանի հետ ու միաժամանակ դիֆերենցիալ հավասարումներ լուծեի:

Պարոն Էյվերին այն մարդկանցից է, որոնք դասերից հետո թողնում են աշակերտներին՝ առանց հարցեր տալու, բայց գուցե դեռ հասցնեմ նրան համոզել: Հազում եմ, մաքրում կոկորդս ու բարձրացնում ձեռքս, հետո հանկարծ նկատում եմ, թե Նեյթն ինչպես է քմծիծաղ տալիս:

— Պարո՛ն Էյվերի, Ձեր գտածն իմ հեռախոսը չէ: Չգիտեմ, թե ինչպես է հայտնվել պայուսակումս: Իմը սա՛ է,– ասում եմ՝ թափահարելով ձմերուկի պես զոլավոր պատյանով iPhone-ս:

Անկեղծ ասած, պետք է լրիվ անխելք լինես, որ պարոն Էյվերիի դասին հեռախոս բերես: Նա ցանկացած հեռախոսի երդվյալ թշնամի է և ամեն դասի առաջին տասը րոպեն նվիրում է ուսապարկերը թափ տալուն, ասես ինքն օդանավակայանի անվտանգության բաժնի պետ է, մենք էլ կասկածյալների ցուցակում ենք: Իմ հեռախոսը պահարանում էր՝ սովորականի պես:

— Քոնն ի՞նչ,– Ադին այնքան կտրուկ է շրջվում իմ կողմ, որ շեկ մազերը, որոնք, ասես, շամպունի կենդանի գովազդ լինեն, փաթաթվում են ուսերին: Նրան երևի վիրահատական ճանապարհով են անջատել ընկերոջից, թե չէ այստեղ մենակ չէր լինի: — Իմ պայուսակում էլ իմ հեռախոսը չէ:

— Նույնն էլ, իմը,– մեջ է ընկնում Կուպերն իր հարավային առոգանությամբ:

Նա ու Ադին զարմացած հայացքներ են փոխանակում. իրենք էլ չէին սպասում, որ մեզ հետ նույն տեղում կհայտնվեն: Երևի սուպերհայտնի մարդիկ ավելի հետաքրքիր թեմաներ ունեն, քան անարդար պատժի մասին քննարկումները:

— Ինչ-որ մեկը մեր գլխին սարքել է,– Սայմոնն առաջ է գալիս, արմունկներով հենվում սեղանին, ասես ներսում զսպանակ ունի, որն ուր որ է մի նոր թարմ բամբասանք օդ կթռցնի: Նայում է մեզ՝ չորսիս, որ իրար գլխի ենք հավաքվել դատարկ դասասենյակի մեջտեղում, հետո հայացքը կանգ է առնում Նեյթի վրա: — Ախր ինչ-որ մեկի ինչի՞ն էր պետք դասերից հետո դպրոցում պահել մի խումբ աշակերտների, որոնք անբիծ ու մաքուր կենսագրություն ունեն: Ինձ թվում է … ա՛խ, չգիտեմ… ինձ թվում է՝ մեզնից մեկը որոշել է օյին խաղալ:

Նայում եմ Նեյթին, բայց հավատս չի գալիս: Ախր այսպիսի պատմություն հորինելն էլ է աշխատանք, իսկ Նեյթն իր